

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Գովազդի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին Օրենքի նախագծի  
(փաստաթղթային կոդ Պ-034-28.02.2019-SՀ-011/0) վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ Աժ պատգամավոր Հրաչյա Հակոբյան	Նախագծի 1-ին հոդված	ՀՕ-55 օրենքի 2-րդ հոդվածում լրացնել նոր պարբերություն, «վիճակախաղերի գովազդ՝ վիճակախաղերի կազմակերպիչների կամ նրանց հովանավորների կամ վիճակախաղերի կամ վիճակախաղերի անվանումների կամ վիճակախաղի ֆիրմային անվանումների (լոգոների) գովազդումը:» բովանդակությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Աժ պատգամավոր Արգիշտի Մեխակյան	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի առաջին պարբերության մեջ «ժամը 21:00-ից 06:00-ն» բառերը փոխարինել «ժամը 22:00-ից 07:00-ն» բառերով, ինչպես նաև «սպորտային միջոցառումների հեռարձակման ժամանակ» բառերը փոխարինել և ավելացնել նոր 2-րդ պարբերություն հետևյալ բառերով.  «Հեռուստահաղորդմամբ ժամը 07:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում սպորտային միջոցառումների հեռարձակումների ժամանակ գովազդ թույլատրվում է ոչ ավելի, քան մեկ անգամ յուրաքանչյուր հաղորդումից հետո և միայն հովանավոր կազմակերպության անվան հիշատակմամբ:»	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Աժ պատգամավոր Հայկ Սարգսյան	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի առաջին պարբերությունից հանել «բացառությամբ սպորտային միջոցառումների հեռարձակման ժամանակ» բառերը:	Չի ընդունվել	Չի ընդունվել
ՀՀ Աժ պատգամավոր Ծովինար Վարդանյան	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի երրորդ պարբերության մեջ ժամը «ժամը 23:00-ից մինչև 06:00-ն» բառերը փոխարինել «ժամը 22:00-ից մինչև 07:00-ն» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Աժ պատգամավոր Արտյոմ Ծառուկյան	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի չորրորդ պարբերության վերջում ավելացնել «Սույն պարբերությամբ հաստատված լրատվական կայքերում տեղակայված գովազդը չպետք է գերազանցի տվյալ կայքէջի երևացող մասի 20%-ից ավելին:» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ Աժ պատգամավոր Հրանտ Մադաթյան	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասում ավելացնել հինգերորդ պարբերություն, հետևյալ բովանդակությամբ՝ «Լրատվական թղթերում ընթացքում մամուլի ակումբում կատարված իրադարձության լուսաբանման ժամանակ ետնամասի պաստառին վիճակախաղի գովազդը թույլատրվում է միայն վիճակախաղի անվանման հիշատակմամբ, որը չպետք է պարունակի վիճակախաղի կայքի հասցե և պետք է պարտադիր պարունակի «21+» տեսանելի նշում:»	Ընդունվել է մասամբ, առանց «ինչպես նաև մամուլի ակումբի պաստառում տեղադրված գովազդը չպետք է գերազանցի ընդհանուր պաստառի 25%-ից ավելին» բառերի:	Ընդունվել է մասամբ, առանց «ինչպես նաև մամուլի ակումբի պաստառում տեղադրված գովազդը չպետք է գերազանցի ընդհանուր պաստառի 25%-ից ավելին» բառերի:
ՀՀ Աժ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագծի 2-րդ հոդված 3-րդ մաս	Նախագծի 11-րդ հոդվածը լրացնել 11.3 մասով հետևյալ բովանդակությամբ. «11.3 Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, խաղատների կամ	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկության գովազդը պետք է պարտադիր պարունակի նախազգուշացում հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Նախազգուշացում խաղին մասնակցությունը նյութական վնասներ կրելու ռիսկ է պարունակում» կամ «Նախազգուշացում խաղին մասնակցելու արդյունքում Դուք կարող եք կրել նյութական վնասներ:» Ընդ որում, նշված նախազգուշացումը պետք է լինի ոչ պակաս շեշտադրված, քան գովազդում առկա մնացած տեղեկատվությունը:»:</p>		
ՀՀ ԱԺ պատգամավոր Հրաչյա Հակոբյան	Նախագծի հոդված 2-րդ	<p>Օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասը ավարտել հետևյալ նախադասությամբ «իսկ խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի գովազդը թույլատրվում է իրականացնել միայն խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի վաճառակետերում:»:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ ԱԺ պատգամավոր Հրաչյա Հակոբյան	Նախագծի 2-րդ	<p>Օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի չորրորդ պարբերությունից հանել «սոցիալական կայքեր» բառերը:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ ԱԺ պատգամավոր Հրաչյա Հակոբյան	Նախագծի հոդված 1-ին	<p>Օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասից հանել «ինտերնետ շահումով խաղեր» բառերը:</p>	Ընդունվել է	Ընդունվել է